ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Արվեստի ինստիտուտ» ՊՈԱԿ-ի և «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի միջև

ք. Երևան **« 8 » դեկտեմբերի 2022թ.**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արվեստի ինստիտուտ» ՊՈԱԿ-ը՝ ի դեմս տնօրեն՝ Աննա Գրիգորի Ասատրյանի, ով գործում է Ինստիտուտի Կանոնադրության հիման վրա և Շուշիի տեխնոլոգիական համալսարանը՝ ի դեմս ռեկտոր Նվեր Ալբերտի Միքայելյանի (այսուհետ՝ Կողմեր), համագործակցելու փոխադարձ ցանկությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

1.2. Կրթադաստիարակչական, գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության ոլորտներում համատեղ մշակել և իրականացնել՝

1.2.1. Փոխշահավետ գիտակրթական և այլ ծրագրեր, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և փորձագետների փոխանակում, հայտարարությունների և փաստաթղթերի ստորագրում, տեղեկատվական, իրազեկման միջոցառումների իրականացում և այս նպատակներին հասնելու համար օգտագործել իրենց հաստատություններում առկա մտավոր և նյութատեխնիկական ներուժը:

1.3. Փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համատեղ հետազոտությունների անցկացում՝ ֆինանսական կարողություններին համապատասխան:

1.4. Երկկողմանի հետազոտության և արդյունքների՝ գիտական հոդվածների հրապարակում:

1.5. Կողմերը սույն Համաձայնագրում կարող են կատարել փոփոխություններ և լրացումներ՝ գրավոր եղանակով, որոնք ուժի մեջ կմտնեն ստորագրման պահից:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կողմերը կապահովեն՝

2.1. ՀՀ և ԱՀ կրթական և գիտական համակարգերում իրականացվող փոփոխությունների, իրավական փաստաթղթերի, ակտերի և միջոցառումների մասին տեղեկությունների փոխանակում,

2.2. համապատասխան մասնագետների մասնակցությունը անցկացվող գիտաժողովներին, սեմինարներին, կոնֆերանսներին, ցուցահանդեսներին,

3.2.3. ուսումնական պլանների թարմացում՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, ՇՏՀ-ի համապատասխան մասնագիտություններով ուսումնական ծրագրերի կազմման գործընթացին Արվեստի ինստիտուտի մասնագետների ներգրավում՝ որպես խորհրդատուներ,

3.2.4. համագործակցել ուսանողների և շրջանավարտների աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանն ու կարիերայի խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացման ուղղությամբ, համատեղ կազմակեպել կոնֆերանսներ, սեմինարներ, ցուցահանդեսներ, խորհրդակցություններ և այլ միջոցառումներ:

3.2.5. Աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ձևավորել մշտական կամ ժամանակավոր կառույցներ, աշխատանքային խմբեր, խորհրդակցական մարմիններ, հանձնաժողովներ:

4. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

4.1. Սույն Համաձայնագրի կատարումն ապահովելու համար Կողմերը նշանակում են մեկական ներկայացուցիչ՝ ՇՏՀ պրոռեկտորի և Արվեստի ինստիտուտի գիտքարտուղարի մակարդակով: Կողմերի ներկայացուցիչները պարտավորվում են՝ համատեղ կարգավորել ընթացիկ փոխգործակցության հարցերը, տարին մեկ անգամ Կողմերին ներկայացնել տարվա միջոցառումների պլանը և այդ ասպարեզում նախորդ տարվա կատարած աշխատանքի մասին հաշվետվություն:

4.2. Կողմերը սույն Համաձայնագրի շրջանակներում ֆինանսական պարտավորություններ չեն կրում:

5. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

5.1. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անժամկետ:

5.2. Սույն Համաձայնագրի փոփոխություններն ու լրացումները կատարվում են լրացուցիչ համաձայնագրով և դառնում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

5.3. Սույն Համաձայնագիրը կարող է լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ ենթադրվող հրաժարումից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ մյուս Կողմին գրավոր ծանուցելով:

5.4. Սույն Համաձայնագրով չնախատեսված հարաբերությունների կարգավորման համար առաջնորդվել ՀՀ օրենսդրությամբ:

3.2.3. ուսումնական պլանների թարմացում՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, ՇՏՀ-ի համապատասխան մասնագիտություններով ուսումնական ծրագրերի կազմման գործընթացին Արվեստի ինստիտուտի մասնագետների ներգրավում՝ որպես խորհրդատուներ,

3.2.4. համագործակցել ուսանողների և շրջանավարտների աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանն ու կարիերայի խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացման ուղղությամբ, համատեղ կազմակերպել կոնֆերանսներ, սեմինարներ, ցուցահանդեսներ, խորհրդակցություններ և այլ միջոցառումներ:

3.2.5. Աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ձևավորել մշտական կամ ժամանակավոր կառույցներ, աշխատանքային խմբեր, խորհրդակցական մարմիններ, հանձնաժողովներ:

4. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

4.1. Սույն Համաձայնագրի կատարումն ապահովելու համար Կողմերը նշանակում են մեկական ներկայացուցիչ՝ ՇՏՀ պրոռեկտորի և Արվեստի ինստիտուտի գիտքարտուղարի մակարդակով: Կողմերի ներկայացուցիչները պարտավորվում են՝ համատեղ կարգավորել ընթացիկ փոխգործակցության հարցերը, տարին մեկ անգամ Կողմերին ներկայացնել տարվա միջոցառումների պլանը և այդ ասպարեզում նախորդ տարվա կատարած աշխատանքի մասին հաշվետվություն:

4.2. Կողմերը սույն Համաձայնագրի շրջանակներում ֆինանսական պարտավորություններ չեն կրում:

5. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

5.1. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անժամկետ:

5.2. Սույն Համաձայնագրի փոփոխություններն ու լրացումները կատարվում են լրացուցիչ համաձայնագրով և դառնում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

5.3. Սույն Համաձայնագիրը կարող է լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ ենթադրվող հրաժարումից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ մյուս Կողմին գրավոր ծանուցելով:

5.4. Սույն Համաձայնագրով չնախատեսված հարաբերությունների կարգավորման համար առաջնորդվել ՀՀ օրենսդրությամբ:

2.3. համատեղ գիտական միջոցառումների՝ գիտական նստաշրջանների, կոնֆերանսների, կլոր սեղանների և քննարկումների կազմակերպում ու անցկացում,

2.4. տարբեր միջոցառումների և ծրագրերի իրականացման ուղղությամբ ծավալուն և առարկայական համագործակցության դեպքում՝ կողմերի միջև երկկողմանի պայմանագրերի կնքում, որոնցով կկարգավորվեն համապատասխան աշխատանքների իրականացումը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Արվեստի ինստիտուտը կիրականացնի հետևյալ միջոցառումները՝

3.1.1. Շուշիի տեխնոլոգիական համալսարանին կտրամադրի իր կողմից հրատարակված գիտական գրականությունը:

3.1.2. իր հնարավորություններով կաջակցի Համալսարանի շրջանավարտների հետբուհական կրթության ապահովմանը՝ ասպիրանտուրայի և հայցորդության համակարգի միջոցով,

3.1.3. կնպաստի Համալսարանում կրթության որակի բարելավմանը, դասախոսական կազմի որակավորման բարձրացմանը,

3.1.4. անհրաժեշտության դեպքում՝ պայմաններ կստեղծի Համալսարանի ուսանողների համար Արվեստի ինստիտուտում մանկավարժական պրակտիկայի կազմակերպման և անցկացման համար,

3.1.5. իր հնարավորությունների սահմաններում կնպաստի արվեստագիտությանն առնչվող միջազգային միջոցառումներին՝ գիտաժողովներին, սեմինարներին, ցուցահանդեսներին, խորհրդակցություններին Համալսարանի դասախոսների մասնակցությանը:

3.1.6. Կկազմակերպի վաստակաշատ գիտնականների դասախոսություններ ինչպես Համալսարանում, այնպես էլ հեռավար ձևաչափով:

3.2. Շուշիի տեխնոլոգիական համալսարանը կիրականացնի հետևյալ միջոցառումները՝

3.2.1. կաջակցի համագործակցության հաջող զարգացմանը՝ Արվեստի ինստիտուտին տրամադրելով անհրաժեշտ տեղեկատվություն իր առաջնահերթ ուսումնական կարիքների և խնդիրների վերաբերյալ,

3.2.2. Արվեստի ինստիտուտին պարբերաբար կտեղեկացնի իր մոտ անցկացվող գիտահետազոտական աշխատանքների, սեմինարների, կոնֆերանսների, կլոր սեղանների, հանդիպում-քննարկումների մասին,

ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

5.5. Սույն Համաձայնագիրը կազմված է իրավաբանական հավասար ուժ ունեցող երկու օրինակից, յուրաքանչյուր Կողմին՝ մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Արվեստի ինստիտուտ» ՊՈԱԿ
ՀՀ, Երևան 0019, Մարշալ Բաղրամյան 24/IV
Հեռ. (+374 10) 583702
Էլ.փոստ՝ instart@sci.am
Կայք՝ www. http://arts.sci.am/
Տնօրեն՝ Աննա Գրիգորի Ասատրյան

ստորագրություն

«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամ

ԱՀ, ք.Ստեփանակերտ, Վ.Վաղարշյան 7
Հեռ. +37447970035
Էլ.փոստ՝ info@shushi-tech.com
Կայք՝ www.shushi-tech.com
Ռեկտոր՝ Նվեր Ալբերտի Միքայելյան

ստորագրություն